

զպատերազմագլուխան³: 196 Եւ ի վերայ շրջեալ զմիւս թելն Վահանայ, բոլորեալ⁴ եւ⁵ ի մէջ առեալ զգաւրսն⁶ Պարսից՝ կոտորեցին մինչեւ յերեկոյն:

197 Եւ իբրեւ⁷ ի մուտս եղել արեւն⁸, մնացին⁹ ի¹⁰ Պարսիցն¹¹ հինգ հարիւր¹² այր, որք¹³ ընդ միջոցն¹⁴ ելեալ¹⁵ փախեան¹⁶: 198 Եւ քանզի մնացեալ¹⁷ էին¹⁸ երիվարք խոցա, երթեալ մտին ի ձոր մի եւ¹⁹ ննջեցին՝ խոյս տուեալ²⁰ մինչեւ ի միւս անուրն²¹ հասարակն²²: 199 Չոր եկեալ զաւրացն²³ գտին եւ ջուր ցանեալ զարթուցին, եւ առեալ տարան զնոսա²⁴ ի Մեղտի: 200 Եւ կոչեցաւ տեղին²⁵ այն Թմբրածոր²⁶: 201 Իսկ Սմբատ հրամայեաց զդիակունսն²⁷ կուտել ի վերայ իրերաց ի բլուրն²⁸. Եւ վասն Վարազայ կոտորածին՝ կոչեցաւ անուն տեղոյն այնորիկ²⁹ Վարազաբլուր³⁰:

202 Եւ ինքեանք եկեալ իջեւանեցան³¹ ի գեւղ³² վանաց³³, որ կոչի³⁴ Կենաց վայրք: 203 Եւ իբրեւ մտին³⁵ ի գեւղն³⁶, ընդ առաջ³⁷ եղեն խոցա պարաւորքն, եւ¹ երգս առեալ՝

-
- 1 հոռո առին փխ առեալ զպատերազմն (Isv)
 - 2 msv չիք եւ
 - 3 Iv, գլուխ պատերազմին, h զպատերազմական գլուխսն փխ զպատերազմագլուխսն (msov)
 - 4 հոռո շրջել բոլորեցին փխ շրջեալ զմիւս ... բոլորեալ (Isv)
 - 5 v չիք եւ
 - 6 հոռո զգաւրս
 - 7 հոռո եւ սկսան կոտորել յանխնայ մինչեւ փխ կոտորեցին ... Եւ իբրեւ (Isv)
 - 8 հոռո արեւուն եւ փխ եղել արեւն (Isv)
 - 9 հոռո մնաց փխ մնացին (Isv)
 - 10 h չիք ի
 - 11 msov Պարսից
 - 12 hm ԴՃ, օ ԳՃ, v չորեքարեւր փխ հինգ հարիւր (Isv₄)
 - 13 m որ
 - 14 հոռո միջոցս, s միջոցսն փխ միջոցն (Inv)
 - 15 hm եղեալ
 - 16 հոռո փախստական եղեն փխ փախեան (Isv)
 - 17 hsv մնացեալք փխ մնացեալ (Im)
 - 18 օ զի մնացին փխ քանզի մնացեալ էին
 - 19 hmv եւ թագեան / օ եւ թաքեն
 - 20 sv առեալ փխ տուեալ (Io) / mv² խոցոտեալ, h խոցւորեալ փխ խոյս տուեալ
 - 21 հոռո ցմիւս անուն անր, v մեւս անուր փխ միւս անուրն (Is)
 - 22 հոռո հասարակ
 - 23 հոռո զաւրացն Գայոց
 - 24 հոռո զարթուցին (hm զարթուցեալ) զնոսա եւ ջուր ցանեցին յերեսս (օ չիք յերեսս) եւ տարան փխ գտին եւ ... տարան զնոսա (2 տող) (Isv)
 - 25 հոռո որ եւ անուանեցաւ ձորն փխ եւ կոչեցաւ տեղին (Isv)
 - 26 ho Թմբրածոր փխ Թմբրածոր
 - 27 mo զվեռեալ դիակունսն, h զվեռեալ դիակունս փխ զդիակունսն (Isv)
 - 28 օ բլեր մի փխ բլուրն (Isv) / hm իրերաց եւ ի վերայ բլերն փխ ի վերայ իրերաց ի բլուրն
 - 29 sv տեղին այն փխ անուն տեղոյն այնորիկ (In) / հոռո անուանեցաւ փխ վասն Վարազայ ... այնորիկ (2 տող)
 - 30 s Վարազայ բլուր, հոռո Վարազակայ բլուր փխ Վարազաբլուր (Inv)
 - 31 sv իջեւանեցան, օ իջին փխ իջեւանեցան (I) / hm եկին իջին փխ եկեալ իջեւանեցան
 - 32 s գիւղն փխ գեւղ (I)
 - 33 hmov վանաց (օ վանացն) գեւղն (m գեղն, h գիւղն) փխ գեւղ վանաց (Is)
 - 34 hmv զոր կոչեն փխ որ կոչի (Is)
 - 35 hm եմուտ փխ մտին (Isv)
 - 36 m գեղն, hs գիւղն փխ գեւղն (Iv) / օ չիք որ կոչի Կենաց ... ի գեւղն (1 տող)
 - 37 օ յառաջ փխ առաջ